ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բյուրավան համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բյուրավան, (093) 23-28-55, byuravanigyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 4

ԲՅՈՒՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017Թ.ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական Ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով

Բյուրավան համայնքի ավագանին

որոշում է

1. Արարատի մարզի Բյուրավան համայնքի ավագանու 23.11.2016թվականի թիվ 9 նիստի թիվ 26-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

2. Արարատի մարզի Բյուրավան համայնքի 2016թվականի բյուջեի կատարման տարեկան արդյունքների մասին

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՀԵ
2. ԼԵՎՈՆՅԱՆ ՎԱԼԵՐԻ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՐԵԺ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ՊԱՎԼՈՒՇԱ
6. ՄԱԼԽԱՍՅԱՆ ԳԵՂԱՄ
7. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԵՂԱՄ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բյուրավան համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բյուրավան, (093) 23-28-55, byuravanigyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 5-Ն

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 23.11.2016ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 9 ՆԻՍՏԻ, ԹԻՎ 26-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18 կետով , << Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով և 16.12.2016թվականի <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքով

Բյուրավան համայնքի ավագանին

Որոշում է

Բյուրավան համայնքի 23.11.2016թվականի թիվ 26-Ն << Բյուրավան համայնքի տարածքում 2017թվականի համար Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> որոշման մեջ կատարել փոփոխություն և այն շարադրել հետևյալ խմբագրությամբ

Բյուրավան համայնքի վարչական տարածքում **2017 թ.**-ի համար սահմանել

տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության թույլտվության համար տեղական տուրքը սահմանել.

*ա. **Հիմնական շենքերի և շինությունների համար՝***

ա/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական տների,ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցողհասարակական և արտադրական նշանակության շենքերին շինությունների համար --- 7500դրամ.

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերին շինությունների համար՝

- 200-ից մինչև500 քառակուսիմետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար --- 15000դրամ.
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար ---- 25000դրամ.
- 1000 – ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար ---- 25000դրամ.
- *3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող* շենքերի և շինությունների *համար --50000 դրամ*

գ. ***Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝***

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար- 1500դր.
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների

համար- 2500դր.

2. Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի, շինությունների վերակառուցման , վերականգնման , ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների թույլտվության համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների ,վերակառույցների ,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն --- 1500 դրամ

բ/ բացի շենքերի, շինությունների վերակառուցման ,ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից նախատեսվում է նաև կցակառույցների ,վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի, շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա,սույն օրենքի իմաստով,այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է --- 2500 դրամ:

1. Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի սեղմված բնական կամ հեղուկացված Նավթային գազերի վաճառքի թույլտվության համար օրացուցային տարվա համար

-100 000 / հարյուր հազար / դրամ:

5. Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար օրացուցային տարվա համար սահմանվում է՝ - 30000 դրամ:

1,2,3,4,5 կետերի համար կիրառված է 0,5 գործակիցը:

6. Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ - 2500 դրամ:

-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ - 5000 դրամ / կիրառված է 0,5 գործակիցը / :

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 դրամ:

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ / կիրառված է 0,5գործակիցը/ :

7. Համայնքի տարածքում՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար -- 350 դրամ. մեկ քառակուսի մետրի համար:

8.Համայնքի տարածքում ընթացիկ տարվա համար արտաքին գովազդ տեղադրելու ըստ յուրաքանչյուր տեղի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա/ այլ արտաքին գովազդի համար -1500 դրամ :

9.Համայնքում աղբահանությունը կազմակերպելու համար յուրաքանչյուր բնակչի համար վճար սահմանել - 0 դրամ

10. Համայնքում աճուրդներ և մրցույթներ կազմակերպելու համար մասնակցության վճար սահմանել -- 2000 դրամ :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՀԵ
2. ԼԵՎՈՆՅԱՆ ՎԱԼԵՐԻ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՐԵԺ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ
5. ՂԱՋԱՐՅԱՆ ՊԱՎԼՈՒՇԱ
6. ՄԱԼԽԱՍՅԱՆ ԳԵՂԱՄ
7. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԵՂԱՄ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բյուրավան համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բյուրավան, (093) 23-28-55, byuravanigyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 6

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական Ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով

Բյուրավան համայնքի ավագանին

որոշում է

Արարատի մարզի Բյուրավան համայնքի 2016թվականի բյուջեի կատարման տարեկան արդյունքները գնահատել բավարար:

Արարատի մարզի Բյուրավանի համայնքի 2016թ-ի բյուջեի տարեկան կատարողականը

Վարչական բյուջեի եկամուտները.

	պլան	կատ.	%
Հողի հարկ ֆիզիկական անձանցից	5140.6	4632,9	90,1
Գույքահարկ փոխադրամիջոցներից	1885,6	2708.0	143,6
Գույքահարկ շենք շինություններից	58.0	53,4	92,0
Շինությունների շինարարության թույլատվության համար	20.0	-	-

Ծխախոտի վաճ. թույլատվություն	40.0	40,0	100,0
Ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացմ. համար	40.0	40,0	100,0
Հողերի վարձակալություն	84,5	84,5	100,0
Վարչական բյուջեի ծախսերը			
Կառավարման ապարատ			
4111- աշխատավարձ	14440.8	14437,6	99,0
4212 - էներգետիկ ծառայություններ	1163.2	1163.2	100,0
4214 - կապի ծառ.	144,0	144,0	100,0
4215 -ապահովագրություն	29,2	29,2	100,0
4221 - գործուղում	0	-	-
4261- գրասենյակային նյութեր	300.0	300,0	100,0
4233 - Աշխատակազմի մասնագիտական Զարգացման ծառայություններ	100,0	73,0	73,0
4269 - Հատուկ նպատակային ծախսեր	90,0	90,0	100,0
4264- Տրանսպորտային նյութեր	800.0	800.0	100,0
4241 – Մասնագիտական ծառայություններ	120,0	120,0	100,0
4232 -Համակարգչային ծառայություններ	114.0	114.0	100,0
4234 - Տեղեկատվական ծառայություններ	200,0	198,2	99,1
5113 – Շենք շինությունների կապ. վերանորոգում	2315,7	2315,7	100,0
5121 - Տրանսպորտային սարքավորումներ	200,0	200,0	100,0
5122 - Վարչական սարքավորումներ	943,7	943,7	100,0
Սանիտարական մաքրում և աղբահանություն			
4213- Կոմունալ ծառայություններ	1200.0	1200,0	100,0
Մշակույթ			
4111 - աշխատավարձ	2440.0	2431,9	99,7
4269- Հատուկ նպատակային այլ նյութեր	810.0	640,0	79,0

Այլ ծախսեր			
4726- Հուղարկավորության նպաստներ	800.0	700,0	87,5
4729- Այլ նպաստներ բյուջեից	5231,0	5231,0	100,0
4819- Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններից	150.0	60,0	40,0

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՀԵ
2. ԼԵՎՈՆՅԱՆ ՎԱԼԵՐԻ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՐԵԺ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ
5. ՂԱՋԱՐՅԱՆ ՊԱՎԼՈՒՇԱ
6. ՄԱԼԽԱՍՅԱՆ ԳԵՂԱՄ
7. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԵՂԱՄ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ